Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ) ծնողների համար

Անդրադարձ կարմրուկի պատվաստանյութի հետ կապված մտահոգություններին

Կարմրուկը պատվաստման միջոցով կանխվող հիվանդություն է: Սա նշանակում է, որ պատվաստանյութը կարող է կանխել մարդկանց վարակվելը և վարակի տարածումը: Պատվաստանյութով կանխվող հիվանդության հետագա բռնկումներից պաշտպանվելու լավագույն միջոցը Լոս Անջելեսի Շրջանում պատվաստումների ցուցանիշը բարձր պահելն է:

Գլխավոր կետեր

- Պատվաստումը շատ հիվանդություններ, օրինակ՝ կարմրուկը, կանխարգելելու լավագույն միջոցն է:
- Պատվաստումն ապահով և արդյունավետ է:
- Պատվաստումը պաշտպանում է Ձեզ և Ձեր համայնքը լուրջ հիվանդություններից:
- Հիվանդության հետագա դեպքերից լավագույն պաշտպանությունը Լոս Անջելեսի Շրջանում պատվաստումների ցուցանիշի բարձր մակարդակ պահպանելն է:

1. Արդյո՞ք պատվաստանյութերն անվտանգ են:

Այո: Պատվաստանյութերն ունենում են մեղմ կողմակի ազդեցություններ, ինչպիսիք են կարմրությունը կամ ցավը ներարկման մասում: Երբեմն երեխաներն ունենում են թեթև ջերմություն կամ հոգնած տեսք: Ավելի լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են: Շատ ավելի հավանական է, որ Դուք կունենաք լուրջ առողջական խնդիրներ հիվանդության, քան պատվաստանյութի պատճառով:

2. Արդյո՞ք պատվաստանյութերն առաջացնում են աուտիզմ:

Պատվաստանյութերը աուտիզմ չեն առաջացնում: Այս միֆը ծագել է մի թերի ուսումնասիրությունից, որը հետագայում հետ է կանչվել: Հետագա ուսումնասիրությունները չեն գտել որևէ կապ պատվաստանյութերի և աուտիզմի միջև: Այս ուսումնասիրությունների մասին ավելի շատ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝
www.cdc.gov/vaccinesafety/concerns/autism.html

3. Արդյո՞ք պատվաստումներն արդյունավետ են:

Այո: Պատվաստանյութերը մարդկանց պաշտպանում են բազմաթիվ հիվանդություններից: Օրինակ՝ ծաղիկ հիվանդությունը 1977 թվականին վերացավ աշխարհում: ԱՄՆ-ում պոլիոմիելիտ չի տարածվել 1979 թվականից: Կարմրուկը 2000 թվականին վերացավ ԱՄՆ-ում:

Չնայած այս հաջողություններին՝ պատվաստումներով կանխարգելվող հիվանդությունները հեշտությամբ կարող են տարածվել, երբ չպատվաստված ճանապարհորդները վիրուսը ԱՄՆ բերեն այլ երկրներից: Բացի այդ, եթե երեխաները դադարեն պատվաստվել, այս հիվանդությունները հեշտությամբ կտարածվեն:

Կա աննշան հնարավորություն, որ պատվաստված անձինք կարող են վարակվել հիվանդության բռնկման ժամանակ, քանի որ ոչ մի պատվաստանյութ 100%-ով արդյունավետ չէ: Հիվանդությունը կանխարգելելու գործում կարմրուկի պատվաստանյութը արդյունավետ է 95%-ով:

Հավելյալ տեղեկությունների համար

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ (CDC)՝

Պատվաստման ժամանակացույց՝ Ձեր և Ձեր ընտանիքի համար՝
www.cdc.gov/vaccines/schedules/

Կարմրուկ՝
www.cdc.gov/measles/index.html

ԿԿԽ (MMR) պատվաստանյութերի մասին տեղեկատվական հայտարարություն (VIS)՝
www.cdc.gov/vaccines/hcp/vis/vis-statements/mmr.html

Պատվաստանյութի անվտանգության մասին ՀՏՀ-ներ ծնողների և խնամակալների համար՝
www.cdc.gov/vaccinesafety/caregivers/faqs.html

4. Ինչպե՞ս են պատվաստումներն օգնում կանխարգելել հիվանդությունները անհատների մոտ և համայնքներում:

Պատվաստանյութերը կարող են պաշտպանել մեզ հիվանդանալուց, նաև կարող են կանխել հիվանդության տարածումը համայնքում: Ցանկացած անձ, որը չի պատվաստվել, հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ է, օրինակ՝ այն երեխաները, որոնք շատ փոքր են պատվաստվելու համար, թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ և պատվաստանյութի նկատմամբ ծանր ալերգիա ունեցող մարդիկ: Երբ ավելի շատ մարդիկ են պատվաստվում, համայնքի պաշտպանության մակարդակը բարձրանում է, իսկ հիվանդությունը չպատվստված մարդկանց փոխանցելու հավանականությունը՝ փոքրանում:

5. Ի՞նչ է անում Հանրային Առողջության Վարչությունը՝ պատվաստումները խրախուսելու համար:

Լոս Անջելեսի Հանրային Առողջության Վարչությունն աշխատում է խրախուսել պատվաստումները հետևյալ կերպ.

- Օգնելով համայնքներին պատվաստումների վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնել՝ պատվաստումների վրա կենտրոնացած արշավների միջոցով:
- Տրամադրելով ուղեցույցներ, դասընթացներ և խորհրդատվություն պատվաստման ծառայություններ տրամադրողներին՝ ապահովելու, որ պատվաստումները լինեն անվտանգ, արդյունավետ և ճիշտ ժամանակին տրվեն ճիշտ հիվանդներին:
- Օգնելով դպրոցներին ու երեխաների խնամքի կենտրոններին հետևել դպրոցի պատվաստման օրենքներին և կրթելով աշակերտներին ու ծնողներին այդ օրենքների հարցում:
- Հսկողություն իրականացնելով պատվաստանյութով կանխարգելվող հիվանդությունների նկատմամբ և արձագանքելով դեպքերին՝ տարածումը կանխելու համար:

6. Ո՞ւր կարող եք Դուք գնալ պատվաստվելու համար:

Զանգահարեք Ձեր բժշկին, որպեսզի ԿԿԽ (MMR) պատվաստում անեք: Եթե չունեք բժշկական ապահովագրություն կամ մշտական բժշկական մատակարար, այցելեք publichealth.lacounty.gov/ip/clinics.htm կամ հավաքեք 2-1-1՝ անվճար կամ ցածր գնով պատվաստումների կլինիկաների ցանկի համար՝ ներառյալ «Պատվաստանյութեր երեխաների համար» (Vaccine for Children) ծրագրի վայրերի, որոնք ծառայում են MediCal-ի համար իրավասու երեխաներին:

Ցանկանո՞ւմ եք ավելին իմանալ պատվաստումների մասին

Կալիֆորնիայի դպրոցներ, մանկական խնամքի/ ցերեկային խնամքի կենտրոններ, քոլեջներ, համալսարաններ
Պատվաստումների մասին տեղեկություններ
Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն, Պատվաստանյութերով կանխարգելվող հիվանդությունների վերահսկման ծրագիր՝ publichealth.lacounty.gov/ip/index.htm

Պատվաստումների պահանջներ դպրոց ընդունվելու համար
Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչություն՝ www.shotsforschool.org/